ցեն, եթէ հարկ էր երկուց հրովարտակացն 'ի միասին ջնջիլ, որպէս պնդեն Յոյնք, Ս · Յարութեան հրովարտակն եւս ջնջեալ է · յայնժամ պարտ էր ամբողջ և աննեղծ համարիլ զհրովարտակն Բեթղեհէմի, զի իւրաքանչիւր տեղւոյ մէն մի հրովարտակ ջնջեալ է · ուստի անտեղի է հակառակութիւնն Յունաց, թէ առաջին հրովարտակն եւս ջնջեալ է։

Փոխանորդն Յունաց · Հայեցեալ յիմաստս հրովարտակին մերոյ բացայայտ ծանուցանէ թէ՝ վասն երից տեղեաց յորոց վերայ լեալ է խռովութիւնն, ջնջեալ են արձանագրութիւնք երից հրովարտակացն Հայոց, և 'ի ձեռս նոցա լեալ է հրովարտակս 4, երեքն ٥١ թուականաւ վասն Տաճարի Ս · Յարութեան, Բեթղեհէմի, և Ձիթենեաց լերին, և չորրորդն ٥٢ թուին վասն Համբարձման, որ հաւատարիմ և 'ի վերայ առաջնոյն հիմնեալ հրովարտակն է, յայտնի է թէ երկու հրաման միով իմաստիւք եղեալ է, եւ վերջինս խափանէ զզօրութիւն առաջնոյն · օրէնք աշխարհի է, եթէ վասն միոյ խնդրոյ լիցի կրկին հրաման թէ միոյն իսկն, և թէ միմեանց հակառակ լիցին, վերջին հրամանն 'ի պատուի է, և ըստ այնմ գործի · ուստի չէ հարկ վերստին կրկնել, բաւական է ջնջումն վերջին հրովարտակին, որով ջնջեալ է և առաջինն։ Յայտնի է ամենեցուն թէ մինչեւ 'ի թուականն ١٢٥٢ և ոչ մի ժամանակ լեառն Ձիթենեաց սեփհական լեալ է Հայոց, և ոչ ուղիղ համարի պատասխան նոցին, թէ ջնջումն երկրորդ հրովարտակին Համբարձման վասն բառի Ս · Յարութեան է, և ոչ Ձիթենեաց լերին · Նախ 'ի հրովարտակին մերոյ բացայայտ գրեալ է թէ՝ վասն Ս · Յարութեան, Բեթղեհէմի և Ձիթենեաց լերին, Հայոց տուեալ երեք հրովարտակքն ջնջեալ են։ Երկրորդ յեղծանիլ միոյ հրովարտակին, որ բովանդակէ զերկուս գործս, կարելի՞ է միոյն մնալ և միւսոյն խափանիլ, որ հակառակ է օրինաց և իմաստուն մըտաց։ Երրորդ՝ բովանդակ շինութիւնք լերին Ձիթենեաց հակառակ են հրովարտակաց, յորս յեցեալ են Հայք · զի 'ի նոսին հրամայեալ է նորոգել 'ի վերայ նախկին դրից, և զի եղծեալ են հրովարտակքն, խափանեալ են և զօրութիւնք նոցին · քննեցին Հէօճճէթք նախկին Դատաւորի և 'ի նոցանէ յայտնի երեւի թէ հակառակեալ են Հայք